

Գահակալ հորին ղեկ Տէր մեծ շնորհաց,
Որ պահում անուանս յատկութեանց նշան:

Ահա իմ վիճակ՝ զառնաղէտ վիճակ,
Երկինք զթառատ զթա ինձ սիրով,
Կըտրել է շունչս, — չունիմ ես հաղագ,
Ինձ միայն մնայ պարկել ընդ հողով:

Տարէք ինձ տարէք շիրիմս իմ որդւոց,
Այն տեղ թող ննջեմ մինչեւ առաւօտ,
Նոցա սուրբ ոսկերք լցնելու յիմ ծոց,
Զըմնալ սրտիս հայրական կարօտ:

Ահա ցերեզման մահու գերեզման,
Ուր պիտի հանգչիմ անփութատ ցաւով.
Ահա իմ ողջոյն՝ ողջոյն հրաժարման,
Որը թողում եմ երկնային յուսով:

ՎԱՀԱՆ ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ ՅԱՂԱՆԷՍԵԱՆՅ.

ՅԱՆԷՍԷՆ, Ի Ն.Ի.Բ.

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

Ս. ՂԱԶԱՐՈՒ ՎԱՆՔ.

Վենետիկ. — Հայոց եկեղեցի. — Ռաֆայէլեան
ուսումնարան. — Ս. Ղազարու վանք:

Մի Հայ մարդ հեռանալով իւր հայ-
րենիքից դէպ ի արեւմտեան Եւրոպա
ճանապարհորդութեան նպատակով՝
սկըզբում կարծում է թէ՛ երկար ժա-
մանակ ոչինչ չսլիտի տեսնէ այն տեղ՝
որը յիշեցնէր իւր ազգը: Բայց յետոյ
որչափ ապշած եւ միտթարուած է լի-
նում նա՝ երբ տեսնում է համարեա
ամենայն քայլափոխում, ամեն մի փոքր
իշտէ նշանաւոր քաղաքի մէջ, իւր
ազգի անցեալ եւ ներկայ կեանքի այս
կամ այն տեսակ յիշատակները — ե-

կեղեցի, աղօթատուն, արձանագրու-
թիւնք, ձեռագիր մատեանք, վաճառա-
կանք, եւլն, եւլն, եւ այս կողմից մեր
ազգը կազմում է մի զարմանալի բա-
ցառութիւն իւր հարեւան Ասիացի ազ-
գերի մէջ. մինչդեռ ոչինչ հետք եւ նշան
չկայ զօ. Պարսից, Վրաց, Տաճկաց պատ-
մական կեանքից, Հայոց ազգը ամենայն
տեղ թողած ունի իւր յիշատակները:
Եւ այնուհետեւ կան մարդիկ՝ մերայինք
կամ մանաւանդ օտարականք՝ որք ծա-
նօթ չլինելով մեր ազգի պատմութեան
հետ՝ վստահանում են ասել եւ կըրկ-
նել թէ Հայոց ազգը միշտ եղել է մի
չնչին՝ աննշան՝ ընդհանուր պատմու-
թեան ասպարիզի վերայ ապարդիւն
ազգ. . . .

Վենետիկը այն բազմաթիւ Եւրոպա-
կան քաղաքներից մէկն է՝ ուր կան Հա-
յոց ազգի բազմաթիւ յիշատակներ:
Ամենեցունց յայտնի է թէ՛ որպիսի լայն
քաղաքական եւ առեւտրական յարա-
բերութիւնք կային միջին դարերում
մեր Կիլիկիայի թագաւորութեան եւ
Վենետիկեան հասարակապետութեան
մէջ: Յետ անկման մեր թագաւորու-
թեան՝ թէեւ քաղաքական յարաբերու-
թիւնքը դադարեցան՝ բայց առեւտրա-
կանը միշտ շարունակւում էր անընդ-
հատ: Տասնեւփեցերորդ եւ տասնեւ-
եօթներորդ դարում այնչափ շատացան
Հայ վաճառականք Վենետիկ քաղա-
քում՝ որ հարկաւոր եղաւ հաստատել
Հայկական եկեղեցի: Այդ եկեղեցին
պահպանուել է մինչեւ այժմ՝ եւ գը-
տանվում է քաղաքի կեդրոնատեղում,
սուրբ Մարկոսի հրապարակից ոչ հե-

ուռ, բայց տարաբախտաբար այժմ՝ այնպէս շրջապատած է մեծամեծ շինութիւններով՝ որ գուրսէն ամենեւին չէ նկատելի:

Յիշեալ եկեղեցին թէեւ խիստ փոքր է, բայց ներսէն շատ գեղեցիկ շինուածք ունի, եւ որպէս պատերի՝ նոյնպէս եւ յատակի վերայ կան բազմաթիւ արձանագրութիւններ Հայերէն բաւական խոշոր տառերով: Կան նոյնպէս բազմաթիւ պատկերներ, զօ. լուսաւորչու պատկերը Տրդատ մկրտելիս, եւն, նոյնպէս Հայկական մակագրութիւններով: Պատկերների մէջ ուշագրութեան արժանի է Աստուածածնայ պատկերը Յիսուսը գրկում յատկապէս իւր նկարչական ոճով, որը շատ նման է Հայաստանի եկեղեցիներում պատահած հնագոյն պատկերների նկարչական ոճին: Եկեղեցւոյ փոքրիկ սրահում կամ ժողովրդանոցում կան բազմաթիւ տապանաքարեր Հայկական եւ երբեմն նաեւ լատինական արձանագրութիւններով: Գոյանից հնագոյնը վերաբերում է 1686 թուին Փրկչի. իսկ թաղածների անուններից երեւում է որ՝ Հայ վաճառականները այն ժամանակներում գալիս են եղել Զուղայից, Ակնից, Կ. Պօլսից եւլն: Թէ՛ ժամանակին եւ թէ՛ պատկերներին նայելով՝ աներկբայելի է որ սոյն եկեղեցին, որ կոչվում է Սուրբ Խաչ, եղել է բուն Հայոց եկեղեցի, բայց յետոյ երբ լուսաւորչական Հայք պակասել են Վենետիկում, Մխիթարեան միաբանք տիրապետել են նորան եւ միանգամայն կերպարանափոխել են ըստ կաթոլիկական ճաշակի: Այժմ տա-

րէնը մի անգամ, այն է Մայիսին՝ եկեղեցու տօնի օրը, Մխիթարեան Ս. Ղազարու վանքի Աբբան պատարագ է մատուցանում, եւ ներկայ են գտնվում համարեա բոլոր միաբանք, նաեւ Ռաֆայէլեան ուսումնարանի աշակերտք, իսկ կիւրակէ օրերը թիւ պատարագ է մատուցանվում այս տեղ Հայերէն լեզուով եւ Հայկական զգեստներով: Եկեղեցին ունի իւր կից եւ քարաշէն տուն, որոյ արդիւնքը ստանում են Մխիթարեանք: Կարծես մեզ համար է յօրինած Վրաց ժողովրդական առածը թէ անպէ՛ք արախն աստանայ՝ քէ՛ք էղան:

Ինչպէս յայտնի է՝ Վենետիկում կայ Ռաֆայէլեան ուսումնարան, նոյնպէս Մխիթարեանց իշխանութեան տակ: Ես չեմ կամենում կրկնել այս տեղ ամենեցուն յայտնի պատմութիւնը թէ ինչպէս գոյացաւ այս ուսումնարանը, այլ կբաւականանամ միայն մի քանի խօսքով նորա այժմեան գրութեան մասին:

Ընդարձակ եւ արտաքուստ հոյակապ տունը պատկանում է ուսումնարանին. սա չէ շինած յատկապէս ուսումնարանի համար, այլ մի մեծածառն պալատ լինելով՝ միայն ըստ կարելւոյն յարմարեցուցած է, ուստի չէ միանգամայն յաջողակ մի մեծ ուսումնարանի համար: Ամբողջ շինութեան ներքին գրութիւնը ապացուցանում է որ տունը շատ տարի է ոչինչ կարկատան եւ նորոգութիւն չէ տեսած, մանաւանդ շատ վատ գրութեան մէջ են դասատանց սենեակները: Ննջարանները զետեղուած են բոլորովին վերնայարկում, որ նոր

յաւելլուած շինութիւն է եւ ներկայացնում է մի տարօրինակ բան, ութսունի չափ մանրիկ սենեակներ կամ լուսնել վանդակներ շաղկապուած են բազմաթիւ նեղ անցքերով: Այդ սենեակները սաստիկ ցածր են եւ այնքան փոքր՝ որ հազիւ մի անկողնու եւ մի աթոռի տեղ կայ: Բայց ամենեքեան բաւական լոյս ունին: Ենթոյ սենեակները եղբարական թեւերով հաղորդակցութիւն ունին մի սենեակի հետ, ուր քրնում է վերակացուն, այդ հարկաւոր է նորա համար որ քիչերը բոլորն ջարանների գոները փակվում են դուրսէն եւ եթէ աշակերտը մի որեւիցէ կարիք ունենայ՝ կարող է հեռագրով իմաց տալ վերակացուն: Միթիթարեան երկու երկուսարդ միաբանք, որք ուղեկցում էին ինձ, բացատրեցին որ մի այգայիսի միջոց դործագրվում է աշակերտների բարոյականութիւնը: պահպանելու նպատակով, թէ որչափ արդիւնաւոր է այդ միջոցը՝ միայն ինքեանք աշակերտները կ'իմանան:

Ուսումնարանում կան 80 ի չափ աշակերտներ 12 տարեկանից մինչեւ 25 տարեկան հասակը: ամենեքեան կրում են միատեսակ հանգերձ զինուորական նշանադրետտի նման: Առման շրջանը բաժանած է չորս դասարանի, բայց ուսման ընթացքը շարունակվում է վեց տարի եւ աշակերտների աւարտումն լինում է միայն վեց տարին մի անգամ: Ռափայելեան ուսումնարանը չէ կրօնական, այլ յատկապէս արտաքին ընդհանուր գիտութեանց՝ գիմնազիական շրջանի սահմանով, թէեւ կրօ-

նագիտութիւնը ուսուցանվում է անխափան: Բայ ի առարկաներից՝ աւանդվում են նաեւ նկարչութիւն եւ երաժշտութիւն ձայնաւոր եւ գործիքաւոր: Աւարտելոց յետոյ աշակերտներից ցանկացողները մանում են արքունի համալսարան, բայց ենթարկվում են նախընթացաբար հարցաքննութեան, որով կերելի որ Իսախանյե տէրութիւնը մեծ վստահութիւն չունի Ռափայելեան ուսումնարանի յառաջգնումութեան վերայ, մանաւանդ որ նա չունի ոչինչ պաշտօնական վերահսկողութիւն իբրեւ Օսմանեան տէրութեան հպատակ հաստատութեան վերայ: Զգիտեմ որչափ բարեկարգուած է ուսումնարանի ուսումնական եւ մանկավարժական մասը, վասն զի աշակերտները քստ սովորութեան հարցաքննութիւններից յետոյ գտնվում են ամարայնոցում քաղաքից հեռու, բայց դասաւանդները եւ նոցա սեղանները՝ նստարանները եւ այլ պարագաները չէին ցուցանում որ այս ուսումնարանը ծանօթ լինէր մանկավարժական գիտութեան նորագոյն պահանջներին: Աշակերտները բուն Հայեր եւ Հայ-կաթոլիկ են՝ սովորում են եւ պահանջվում են ճիշտպէս եւ ապա իւրեանց հայրենիքները վերադառնալու համար ստանում են նաեւ ճանապարհածախք: Թէպէտ իմ ուղեցոյց երկու Միթիթարեանք անացին թէ ուսումնաւարտ աշակերտները իբր ոչինչ պարտաւորութիւն չունին իւրեանց վերայ, բայց աներկբայելի է որ նոքա պարտաւոր են արժարձել Հայոց մէջ կաթոլիկ կրօնը ուր որ երթան:

Նոյն ուղեցոյցներս ասացին թէ՛ Մխիթարեան վանքը ամենեւին չէ՛ ընդունում՝ քահանայացուներ այդ աշակերտներինց։ Այերջապէս՝ Սափայեւեան ուսումնարանի վերատեսուչը եւ վերահայրները Մխիթարեան միաբանք են, իսկ արտաքին գիտութեանց ուսուցիչները աշխարհական մարդիկ։

Մխիթարեան միաբանութեան գլխաւոր կեդրոնը Ս․ Աղաբաբու վանքն է։ Սա մի փոքրիկ կղզի է կէս ժամ (նաւակով) հեռաւորութեամբ քաղաքից։ Արտաքուստ ոչ մի բան, ոչ շինութիւնք՝ ոչ զանգակատունը՝ չեն յիշեցնում որ այդ կղզին լինի Հայկական միաբանութեան բնակարան։ Բայց ի ներքուստ վանքը գործում է շատ ակտիւ եւ արդարեւ պաւորութիւն։ Մտնելուն պէս՝ ամենից առաջ տեսնում ես մի փոքրիկ պարտէզ զարդարած գեղեցիկ ծաղիկներով եւ փոքր շատրուանով․ պարտիզի չորս կողմը բոլորում է լայն եւ կամարներով ծածկած անցք։ Անցքի աջակողմեան մասը տանում է դէպ ի մի միջակ սենեակ ի զանազան սրբոց պատկերներով, այդ է ընդհանուր ընդունարանը, թէեւ կայ այդ անց միայն մի կարճ թախտ (դիւան) եւ երեք չորս աթոռ։ Ընդունարանին կից են ներքնայարկում մի քանի մանր սենեակներ սպասաւորաց համար, եւ ասպ խոհանոցը եւ սեղանատունը։ Խոհանոցը չի նաժ եւ Եւրոպական ձեւով եւ պահպանուած է գեղեցիկ մաքրութեամբ, իսկ սեղանատունը ներկայացնում է բաւական ընդարձակ դահլիճ զարդարած գեղեցիկ պատկերներով։ Արքայ

հայրը ունի առաջին սեղան դռան դիմաց աւագ պատի տակ, իսկ միաբանութեան սեղանները շարած են պատերի մօտ դահլիճի երեք կողմը։ Սեղանատան փոքրիկ գոնակի գլխին ներսի կողմից կայ Մխիթար Աբբայի արձանագրութիւնը, որը պատուիրում է լռութիւն պահպանել եւ լսել ճաշութեան ժամանակ։ Սեղանատանում ճաշակից են լինում ոչ միայն միաբանք, այլ եւ աշակերտները եւ աշխարհական եղբարք։

Պարտիզի արեւելեան կողմում գետեղուած է փոքրիկ եկեղեցին, որը ունի բարձր եւ գեղեցիկ զանգակատուն․ ըստ կաթոլիկական սուրբութեան՝ եկեղեցին զարդարած է ոչ միայն սրբոց պատկերներով, այլ եւ արձաններով, իսկ սեղանները նաեւ արուեստական ծաղիկներով։ Պատարագի ժամանակ միաբանութիւնը եւ աշակերտները կանգնում են առաջին դասում մօտ աւագ սեղանին, իսկ հասարակ ժամասացութեան միջոցին երկրորդ դասում։ Ուր կայ Աբբայի համար առանձին աթոռ։ Բոլոր եկեղեցու մէջ շարած են երկար նստարաններ թէ՛ միաբանութեան եւ թէ՛ ժողովրդականաց համար։ Եկեղեցին ունի եւ իւր ընդարձակ աւանդատունը։ Սրբոց պատկերների մէջ կան նաեւ Ս․ Առաքաւորչի, Ս․ Սահակայ, Ս․ Մեսրոպայ եւ Ս․ Ներսէս Շնորհալու պատկերները։ Ժամասացութիւնը լինում է Հայերէն լեզուով եւ Հայկական զգեստներով, իսկ պատարագը լինում է սովորաբար

Եւ, տօն օրերին յայտարարեալ իմ ներկայութեամբ կիրակի եւ երկուշաբթի երեկոյն չամբարձի շարականը նոյնպէս իմ ասացին:

Վերոյիշեալ պարտիզի շրջապատող շինութեանց վերնայարկը շատ գեղեցիկ տեսարան է ներկայացնում: Սեղանատան գլխին զետեղուած է մատենադարանը գեղեցիկ բարեկարգութեամբ. այստեղ կայ ընդ ամենը չորս սենեակ, այն է՝ մի փոքրիկ նախասենեակ, մի փոքրիկ սենեակ աջ կողմում, եւ երկու՝ մի մեծ եւ մի փոքր սենեակ ձախ կողմում: Բաց ի գրքերից կան նաեւ այլ եւ այլ ուսումնական պարագաներ եւ մի եգիպտական հոգեւորական շատ գեղեցիկ կերպով պահպանուած: Լայն անցքը (կորրիտոր) տանում է դէպի մի այլ դահլիճ, ուր պատերի վերայ կախած են գեղեցիկ շրջանակների մէջ բոլոր հանգուցեալ Աբբաների եւ նշանաւոր միաբանների պատկերները զանգուած ներկերով: Այս դահլիճը մի քաղցր յիշատակ է գործում՝ ներկայացնելով վանքի նոր սերունդի երախտագիտութիւնը առ իւր նախորդները: Այդ դահլիճի միւս կողմը շարունակվում է նոյնպէս լայն եւ գեղեցիկ անցք զարդարած գեղեցիկ պատկերներով. այս տեղ կան մի քանի խցեր միաբանութեան համար եւ մի ընդարձակ սենեակ — ճէմարան՝ լրագիրների ընթերցարան: Իսկ անցքի վերջում կայ մի նորաշէն հոյակապ դահլիճ — Խանգարան, ուր կան հանքաբանութեան եւ թրուշնաբանութեան ժողովածուներ, եւ բնական գիտութեան այլ ճիւղերին վե-

րաբերեալ պարագաներ, մեքենաներ եւլն: Առաստաղի խարխիւների չորս կողմում շարած են սպիտակ կաւիճից (պարամորա) շինած պատկերներ Հայոց հին եւ նոր նշանաւոր անձանց, իսկ ինքն առաստաղը զարդարուած է գեղեցիկ պատկերներով, ուր մի հրաշալի պատկեր մանաւանդ գրաւում է հայ մարդու ուշադրութիւնը: Այդ պատկերը ներկայացնում է մի երիտասարդ չքնաղ կին արքայական ծիրանիներով եւ թագով զարդարած. դա է Վենետիկեան հասարակապետութիւնը: Սա վերկացած իւր գահից եւ մի քայլ առաջ գնացած դիմաւորում է գրկաբաց մի այլ երիտասարդ եւ նոյնպէս չքնաղ տիկնոջ արեւելեան հագուստով եւ արքայական նշաններով զարդարած. դա է Հայաստանը:

Վանքը ունի երկու դպրոց, մինը կոչվում է Նորնճայից դպրոց, միւսն Վարձարան: Նոքա բոլորովին բաժանուած են միմեանցից եւ զետեղուած են կղզու զանազան մասներում: Նորնճայից դպրոցում կան 11 աշակերտք 12 — 20 տարեկան հասակի. նոքա բաժանուած են չորս դասարան եւ ուսանում են հետեւեալ առարկաները. — Հայերէն, Գաղղիերէն, Իտալերէն լեզու, Թուրքանութիւն՝ աշխարհագրութիւն քաղաքական՝ բնական եւ ուսումնական. հին եւ նոր պատմութիւն եւ աշխարհագրութիւն, ազգային պատմութիւն, հնախօսութիւն պատմական ազգաց եւ Հայոց, Քրիստոնէական վարդապետութիւն եւ սրբազան պատմութիւն, գե-

ղաղարութիւն, մանրութեանը^(*)։ Այս դպրոցից յառաջագէտները անցնում են վարժարանը, ուր այժմ կան 9 աշակերտներ եւ ուր ուսմունքը շարունակվում է հինգ տարի. աւանդելի աւարկայքը սոքա են. — ձարտասանութիւն, Իմաստասիրութիւն, Սրբազան գիտութիւնք, Սրբազան լեզուագիտութիւն, Բնագիտութիւն, չափաբերական երկրաչափութիւն, տեսական եւ բարոյական Աստուածաբանութիւն, Ժամանակագրութիւն եւ Տօմարագիտութիւն, ընդհանուր պատմութիւն^(**)։ Վարժարանում աւարտածները ստանում են քահանայութիւն կամ վարդապետութիւն եւ կամ մնում են վանքում, կամ ուղարկվում են զանազան տեղեր քարոզութեան համար։ Երկու դպրոցաց աշակերտները սաստիկ հսկողութեան ներքոյ են եւ դուրսէն փակուած են բանալիով։ Նոցա ննջարանները նոյնպէս խիստ փոքրիկ սենեակներ են, իսկ դասարանները եւ նոցա պարագաները չեն համապատասխան մանկավարժական պահանջներին։ Ուսուցիչները ըստ մեծի մասին միաբանութիւնից են, բայց ունին իբր ինչպէս առաջին՝ եւ աշխարհական ուսուցիչներ։ Ամառնային արձակուրդների եւ վարժարանի աշակերտների բացակայութեան պատճառով ես չկարողացայ ստուգել սոյն երկու դպրոցի

յառաջագիտութեան աստիճանը։ Միաբաններից մէկը ինձ ասաց թէ վանքի բոլոր հրատարակութիւնքը եւրոպական լեզուներով նախընթացաբար սրբագրուած են լինում հմուտ լեզուագէտների ձեռքով, զոր օրինակ անգղիերէնը հմուտ անգղիացւոյ ձեռքով, գաղղիերէնը գաղղիացւոյ ձեռքով եւ այլն. սորանից երեւում է որ վանքի երկու դպրոցի մէջ լեզուագիտութիւնը չէ հօր։

Վանքի տպարանը ի վաղուց վայելում է մեծ համբաւ իւր գեղեցիկ եւ շքեղ տպագրութեամբ. այժմ սառնի հինգ մամուլ, բայց ամենքը չեն բանում։ Ինչպէս միաբանք ինքեանք ասացին՝ տպարանի գործունէութիւնը վերջին ժամանակներում բաւական նուազել է։ Բոլոր աշխատաւորները, գրաշարները, տպագրիչները, եւ այլն, աշխարհական մարդիկ են եւ ոչ միաբանք։

Վանքը ունի տարեկան ծախք մօտ 100 հազար կամ աւելի ֆրանկ, իսկ մուտքը գոյանում է զանազան անշարժ կալուածքներից, որք գտանվում են Վենետիկ քաղաքում եւ շրջակայքներում, մայր գումարի տոկոսից, գրալածառութեանից, յօժարակամ նուէրներից եւլն։ Նախելով բաւական բարեվայելուց ապրուստին եւ այլ նշանաւոր ծախուց՝ պէտք է հաւատալ միաբանութեան խօսքին թէ մուտքը հազիւ ծածկում է ծախքը։

Վանքը ունի իւր սեփական պիտոյից համար նոյն իսկ իւր կղզու վերայ փոքրիկ այգի եւ սլարտէզ պտղատու ծառերով, այլ եւ խիստ մօտ եղած միւս կղզւոյ վերայ բաւական ընդարձակ սեխիստան եւ այգի իառն։ Բաց ի սո-

(*) Մեր նախնիք երաժշտութեան մանր ուսմունք անունը տուած են։

Մ. Խ. Բ.

(**) Այս երկու ծրագիրը յամենց ինձ նորընծայից դպրոցի ուսուցիչներից մին։

բանից վանքը պահում է 25 ի չափ հիւանալի կողեր: որոց կաթը փոքր մասնով գործածվում է միաբանութեան համար: իսկ մեծ մասով ծախվում է:

Միաբանութեան կեանքը բոլորովին եղբայրակեցական է. ոչ ոք չունի որ եւ իցէ ռոճիկ կամ գրամաւոր վարձատրութիւն: ոչ Աբբան եւ ս'չայլք: այլ ամենքը հաւասար կերպով ստանում են վանքից բնակարան: կերակուր: բոլոր հանդերձներ եւ ամենայն կարեւոր պիտոյք: Խրցերը բաւական ընդարձակ են եւ լաւ լուսաւորուած՝ համեստ կահ եւ կարասիքով: Երկու անգամ վանքում ճաշ կերայ եւ ըստ այնմ կարելի է ասել որ կերակուրը նոյնպէս շատ գոհացուցիչ է: Միաբանք ստանում են առաւօտը կաթ: կէսօրին եւ երեկոյեան ճաշ եւ ընթրիք: իսկ երեկոյեան ժամից յետոյ դայֆա. բոլոր աշակերտները ուտում են միաբանութեան հետ միասին: բաց ի երեկոյեան դայֆայից:

Շորերը շատ պարզ են եւ մաքուր: եւ միատեսակ թէ միաբանութեան եւ թէ աշակերտների համար: Սովորաբար կըրում են երկար պարեգօտ (կապա) եւ բարակ ու նեղ կաշու գօտիկ: գլխին սեւ փոքր ծածկոց (արադչին) միայն գագաթի վերայ: իսկ եկեղեցի գնալիս ծածկում են ամենքը փիլոն մէջքի վերայ կախ ընկած կոնաձեւ պարկով: որ կոչում են վեղար. բայց այդ վեղարը երբէք չեն գնում գլխին: Աշակերտները փոխանակ փիլոնի կրում են նեղ թեւերաւոր վերարկու (ֆառաջա):

Միաբանութեան առողջութիւնը բաւական գոհացուցիչ է. խաղաղ եւ հան-

գիստ կեանքի եւ բաւական ապահով եւ գոհացուցիչ ապրուստի շնորհիւ միաբանք սովորաբար սակաւ հիւանդանում են եւ երկարակեաց են լինում: Բաց ի ուրիշ առողջապահական միջոցներից՝ միաբանութիւնը սովորութիւն ունի գնալ ամառանոց իւրեանց սեփական գեղը՝ բայց ոչ բոլորեքեանք միասին: այլ մի մասն ամառուայ սկզբում, միւսը վերջում: Այդ իսկ պատճառով եւ չտեսայ նորընտիր Աբբահայրը եւ միաբաններից ու աշակերտներից շատերը:

Խօսակցութեանց ժամանակ բոլոր միաբանք խիստ ջերմ ազգասէր կձեւանան: բայց երբ խօսքը հասնում է կրօնական խնդիրներին՝ իսկոյն փոխվում է բանը: Դեռ երիտասարդ միաբաններից երկուքը բացարձակապէս ասացին ինձ՝ թէ ըստ իւրեանց համոզմանց արտաքոյ Հռովմէական եկեղեցւոյ չկայ հոգու փրկութիւն: Ամենքը կաթոլիկների վերայ խօսելիս անդադար կրկնում են «դժոխ» բառը: իսկ Հայերի վերայ խօսելիս խոյս են տալի շայ ամուներ գործածելուց: այլ ասում են «ոչ», «չեղանկ», «չեղան», «չ»: Ահա սոյն այս մարդիկ կրկնում են որ ազգի յառաջագիմութեան համար են զոհում իւրեանց կեանքը եւ գործունէութիւնը եւ հառաչելով ասում են՝ երանի կլինի այն օրին երբ բոլոր Հայերը «դժոխ» (իմա կաթոլիկ) կզառնան: Այս ազգասէրները իւրեանց եկեղեցւում փոխանակ ընդհանուր Հայոց Սրբազան Աթոռի կոսին՝ յիշում են Պապը. եկեղեցւում բաղմեցուցած ունին Ս. Լուսաւորչի, Ս. Սահակայ, Ս. Մեսրոպի, Ս. Ներ-

սէս նորոհալու պատկերները՝ դիմում են աղօթքի մէջ այդ որբոց բարեխօսութեան, զոր օրինակ Աստուծոյ ժամանակ Բարեխօսութեան մէջ, եւ միեւնոյն ժամանակ ասում են թէ Հայոց եկեղեցւոյ մէջ չկայ հոգու փրկութիւն, կարծես թէ այժմեան Հայաստանեայց եկեղեցին նոյն Աստուծոյ իջը չէ հաստատել, նոյն Սահակ եւ Մեսրոպը չեն բարեկարգել, նոյն Ներսէսները չեն պայծառացրել, եւ նոյն հին սուրբ հարց եւ հայրապետաց ուղղափառ վարդապետութիւնից հեռացած է եւ այլ վարդապետութիւն է դաւանում: Երբ ասում ես նոցա որ՝ Հայոց ազգութեան փրկութեան եւ յարատեւութեան համար հարկաւոր է միութիւն, ամենայն տեսակ միութիւն, մանաւանդ կրօնական միութիւն, նոքա պատասխանում են թէ Աստուծոյ ճանաչելու ճշմարտութիւնը բարձր է ազգային միութիւնից եւ ամենայն բանից, կարծես թէ ամբողջ Հայոց ազգը Աստուծոյ ճանաչում: Որչափ մեծ է գեղեցիկ է, քաղցր է Ս. Ղազարու վանքի արտաքին տպաւորութիւնը, այնչափ դառն է՝ վշտալի է՝ ցաւալի է՝ նորա կրօնական ուղղութեան տպաւորութիւնը: Բայց կգայ մի օր երբ Մխիթարեանք կհասկանան եւ կհամոզուին որ կանգնած են սխալ՝ ազգակործան ճանապարհի վերայ եւ կշտապեն դիմել դէպի ուղիղ եւ ազգաշահ ճանապարհը ինչպէս շատերը նոցանից արդէն դիմել են, նոյն իսկ ներկայ միաբաններից շատերի յայտնած փափագը մի ճանապարհորդութիւն կառարել դէպի Հայ-

աստան՝ եւ մանաւանդ ի Ս. Էջմիածին՝ նշան է նոցա արթննալու, եւ մեզ մընում է միայն ցանկալ որ վեցերորդական Ս. Ղազարու վանքը օր առաջ արթննայ:

Վ. Վ. Բ.

Ի 20 Ն Սեպտեմբ. 1877 թ.

Ի Վ Էջմիածին:

Արթ. Նամակագրի վերեւ յայտնած եւ պարզած թէ նկատողութիւնքը եւ թէ դիտողութիւնքը շատ իրաւացի եւ ճիշտ են, եւ պէտք է յաւէտ բարեմաղթել որ մեր պապադաւան եղբարք շնորհիւ Տեառն օր առաջ արթննան եւ տեսնեն այն բազմակուլ խորխորատը եւ վերահաս դառն վտանգը՝ որոյ մէջ գուցէ սակաւ միջոցէն իսպառ պիտի անհետանան եթէ անտարբերութեամբ շարունակեն ներկայ վիճակում միջնագարեան համոզմունքով, եւ իսպառ ի դուր է յուսալ՝ զի Հայ մնալ ցանկալով՝ կարող են նաեւ հռովմէադաւանութիւնը պաշտել եւ ընդ նմին յարատեւել՝ կարծելով որ Քրիստոսի Եկեղեցւոյ մէջ հոգւոյ փրկութիւն կգտնուի: Եւ միթէ այդքան կը տկարանան մտածել, որ երբ հռովմէականութիւնն գլխեր եւ ցերեկ եւ ամենուրեք կը տքնի արգիւնաւորել՝ որ իւր եկեղեցւոյ մէջ անհետանան ազգային զգացմունքները եւ խորութիւնքը՝ բոլորն եւս ի մի ձուլուելով յանուն կրօնի ի ծոցի հռովմէական եկեղեցւոյ՝ ինչպէս նաեւ մերկանալով ազգային եւ ազգայնութեան ինքնություն եւ անկախ իշխանութիւններէն կամ թէ յատկութիւններէն, ինչպէս կը մընեն եւ կհաւատան մանաւանդ մեր

պապագաւան եղբարք՝ զի միշտ կարող են Հայ մնալ եւ Հայ ապրիլ ընդ ծոցով պապականութեան, եւ ի՞նչ կկարծեն, երբ Հայութեամբ կսիրեն պարծենալ՝ իւրեանց եւ մեր ամենուն Հայկազուն նախնիք՝ հաւիտեան զինելու համար հոգւոյ իրենց զինելու էն, եւ ինչո՞ւ Համար սուրեմն ինքեանք եւ նոյն իսկ հռովմէագաւան եկեղեցին Հայաստանեայց եկեղեցւոյ սուրբ Հայրերէն եւ Հայրապետներէն բաւական անձինքը կաօնեն։ Չէ՞ որ այսպէսով ինքնին մի հակասական եւ բոլորովին մոլորեալ մի ճանապարհի վերայ կանգնած են թէ հռովմէագաւան եկեղեցին եւ թէ հռովմէագաւան մեր եղբարք։

Այս խնդրոյ համար հետագայ թերթերում աւելի ընդարձակ կանոնուիմք։

Ի Ս. ՊԵՏԵՐՍԲՈՒՐԳԷ.

Ի Ս. Պետերսբուրգ հրատարակեալ Հիւսիսային համբարան (Սէվերնիյ Վէսթնիկ) անուն ռուսերէն լրագրոյ Խմբագրութիւն՝ Մ. Օ. Ք. ստորագրեալ մի անձէն ի նպատակագրեւանդցի Հայոց Ժողովուրդի ռուսերէն նուէր ստանալով՝ յանուն Վեհ. Հայրապետի յղած էր, որոյ համար յատուկ շնորհակալութիւն կ'յայտենմք։

Բազմափնտռեալ եւ սրտաճմլիկ մի տեսարանի առթիւ՝ կարեկից Ռուսներէն՝ Լեհացիներէն՝ Վրացիներէն՝ Օսմանցիներէն՝ Պարսիկներէն եւ տեղեկան թուրքերէն ու Քիւրտներէն ի կարեկցութիւն եւ ի նպատակ թշուառացեալ Հայոց ցոյց տրուած մարդասիրութեան եւ ջանից

համար մեր զգացած ուրախութիւն եւ մխիթարութիւնը չեմք կարող ծածկել։

Հետագայ հաշիւը Ամսագրոյս միջոցաւ հրատարակել խնդրուած է։

ՀԱՅԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ

ՄԱՐԿԱՆԻՍԻԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՐՆ

ՆՈՐ ՆԱԽԻՋԵՆԻԱՆԻ ՎԱՍՆ 1877 ՈՒՄ

Հոգարարծուաց Խորհրդարանն Մարդասիրական Ընկերութեան իւր կանոնադրութեան Ժեյ յօդուածոյն համաձայն, պատիւ ունի առաջի առնել այսօր դերյարդոյ անդամոց ընդհանուր ժողովոյս անցեալ 1876 աթի տարեկան հաշիւը, որոյ մէջ բացայայտ կտեսնուին, որպէս Ընկերութեան, նոյնպէս եւ իւր տեսչութեան ներքոյ դրուած ձառնկաւորաց դպրոցի եկամուտն ու ծախսը, եւս եւ Ընկերութեան առ մին Յունիարի 1877 տարւոյս ունեցած կարողութիւնը։

Իսկ ամենայն մտից եւ ծախուց պատկերը ներկայացնելէ առաջ, Խորհրդարանս Հոգարարծուաց հարկ կհամարի՝ ցաւօր սրտի յիշատակել աստանոր թէ 1876 ամին ամենաճշուառ տարին եղաւ Ընկերութեանս համար՝ իւր դոյութեան տամնամեայ ընթացքին մէջ՝ որ մեծ ծախսորդութեան ու վնասուց հանդիպեցաւ։ Բայց այնու ամենայնիւ, փառք ամենախարողին Աստուծոյ, որ այդ տարաբաղդութեամբ Ընկերութիւնս կարծես, նոր ոյժ ու զօրութիւն ստացաւ Հոգարարծուաց ու դերյարդոյ անդամոց ջերմեանդութիւնն ու սէրը աւելացնելով առ Ընկերութիւնս եւ յայտնի ապացոյց տալով՝ որ չպիտի մեռնի Աստուածամանոյ եւ ազգին օգտակար ձեռնարկութիւնը, այլ օր քստ օրէ ամրանալով սէտք է շարունակէ իւր գործունէութիւնը՝ առանց թուանալու յօգուտ ազգի ազրատիկ զաւակաց եւ եկեղեցւոյ։

Այս րանի մի խօսքերով ն, կարծիք չկայ, որ զուշակեց ժողովը Խորհրդարանիս ասելիքը, որ է Ընկերութեանս զանազան հոգեբան Աւանդականի քստ ամենայնի աւանդակալ անձնապատմութիւնը, որով Ընկերութեանս հատուցած նշանաւոր վնասն իզաւ հետեւեալ կերպով